ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան

«22» հոկտեմբեր 2019թ.

2019թ-ի հոկտեմբերի 14-22, ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Դ. Մադոյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄՍ ԱԿ և ՄԻԲ-ի պետի պ/կ.
Ս. Ավագյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ N1 էն. բլոկի էլեկտրական արտադրամասի պետի տեղակալ շահագործման գծով.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի իրավապայմանագրային բաժնի պետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Մաքրող հեղուկ Genuine ABRO; 340գ.	5600
2.	Մաքրող հեղուկ WD 40	19200
3.	Պտուտակահան	1792
4.	Պտուտակահան	2392
5.	Փական	57000

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հոկտեմբերի 14-ի, ժամը «13:00»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձիք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	ԱԻԴԱ ԹՐԵՅԴ	-	-
2	ԲԱՐՍԻՍ ՍՊԸ	ք. Երևան, Արշակունյաց 57/2	spartak_tsatinyan@barsisgroup.am
3	Էկոմիքս ՍՊԸ	Լենինգրադյան 31/1, բն. 28	tenders@360shinbaza.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցները հայտերը կազմել և ներկայացրել են ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան բացառությամբ ԱԻԴԱ ԹՐԵՅԴ-ի՝ համակարգի միջոցով մասնակցի կողմից փաստաթղթեր չեն ներկայացվել, բացակայում են հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը՝ այդ թվում նաև գնային առաջարկը: Վերջինիս հայտը գնահատվեց անբավարար և մերժվեց.,

• Մասնակիցների՝ ԲԱՐՍԻՍ ՍՊԸ-ի և Էկոմիքս ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,

• Մասնակիցների՝ ԲԱՐՍԻՍ ՍՊԸ-ի և Էկոմիքս ՍՊԸ-ի, կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի և մասնակցի զբաղեցրած տեղի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	-	-	-	-
2*	-	Էկոմիքս ՍՊԸ	23333.33	28000
3	-	-	-	-
4	-	-	-	-
5	1	ԲԱՐՍԻՍ ՍՊԸ	22500	27000
	2	Էկոմիքս ՍՊԸ	69300	83160

* Տվյալ չափաբաժնի մասով վարվել են բանակցություններ՝ արդյունքները ներկայացված են ստորև

Որոշվեց՝

1. Ա. Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Նիստը 2-րդ չափաբաժնի մասով կասեցնել /բանակցություններ/:
3. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել 2-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված մասնակցին գների նվազեցման շուրջ բանակացությունների վարման մասին:

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ/ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն 2-րդ չափաբաժն մասով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին նոր նվազեցված գնային առաջարկներ չեն ներկայացվել:

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:
2. Ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/147 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան

Հանձնաժողովի անդամներ՝

Դ. Մադոյան

Ս. Ավագյան

Ա. Վարդանյան

Ա. Վարդապետյան

Ա. Պետրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան